ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 49-Ա

10 ՄԱՅԻՍԻ 2023թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Կապան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2023 թվականի մայիսի 10-ի չորրորդ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2006 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 71-Ա որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու, «Կապանի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և գույք ամրացնելու մասին

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրից ծագած պարտավորությունները ներելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը դուրս գրելու և քանդելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Աղվանի բնակավայրի համակցված փաստաթղթերում փոփոխություն կատարելու և 0.003 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

6. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ Հայաստանի Հանրապետության համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով Հայաստանի Հանրապետության համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին

8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը որոշելու մասին

**Կողմ( 21 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ____________

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ____________

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ____________

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ____________

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ ____________

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ____________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ____________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ____________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ____________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ ____________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ____________

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ____________ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*2023թ. մայիսի 10*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 50-Ն**
**10 ՄԱՅԻՍԻ 2023թ.**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 199-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ համաձայն N 1, 2, 3 և 4 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 21 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ____________
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ____________
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ____________
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________
ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ____________
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________
ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ ____________
ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________
ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ______________ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*2023թ. մայիսի 10*
*ք. Կապան*

*Հավելված 1*
*Կապան համայնքի ավագանու*
*«10» մայիս 2023թ. թիվ 50-Ն որոշման*

**Կապան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի թիվ 199-Ն որոշման թիվ 1 հավելվածում կատարվող փոփոխություններ**

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1000** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)** | | **0,0** | **0,0** | **0,0** |
| | այդ թվում՝ | | | | |
| **1300** | **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | | **0,0** | | **0,0** |
| | այդ թվում՝ | | | | |
| **1390** | **3.9 Այլ եկամուտներ** | | **0,0** | | **0,0** |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | **263000,0** | | **263000,0** |

*Աշխատակազմի քարտուղար* *Նելլի Շահնազարյան*

*Հավելված 2*
*Կապան համայնքի ավագանու*
*«10» մայիս 2023թ. թիվ 50-Ն որոշման*

**Կապան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի թիվ 199-Ն որոշման թիվ 2 հավելվածում կատարվող փոփոխություններ**

(հազար դրամներով)

| Տողի NN | Բա-ժին | Խում-բ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** (տող2100+տող2400+տող2500+տող2600+տող2800+տող 2900+տող3000+տող3100) | **0,0** | **0,0** | **263000,0** |
| 2400 | **04** | **0** | **0** | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** (տող2410+տող2420+տող2450+տող2490) | **77000,0** | **0,0** | **77000,0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | **77000,0** | **0,0** | **77000,0** |
| | | | | որից՝ | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | ճանապարհային տրանսպորտ | **77000,0** | **0,0** | **77000,0** |
| 2900 | **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** (տող2910+տող2950+տող2980) | **206000,0** | **20000,0** | **186000,0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2910 | **09** | **1** | **0** | ***Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն*** | **206000,0** | **20000,0** | **186000,0** |
| | | | | որից՝ | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | **206000,0** | **20000,0** | **186000,0** |
| 3100 | **11** | **0** | **0** | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ** (տող3110) | **-283000,0** | **-20000,0** | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | ***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ ,որից՝*** | **-283000,0** | **-20000,0** | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | **-283000,0** | **-20000,0** | |

*Աշխատակազմի քարտուղար* Նելլի Շահնազարյան

*Հավելված 3*
*Կապան համայնքի ավագանու*
*«10» մայիս 2023թ. թիվ 50-Ն որոշման*

**Կապան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի թիվ 199-Ն որոշման թիվ 3 հավելվածում կատարվող փոփոխություններ**

(հազար դրամ)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ վարչական մաս | ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** (տող4050+տող5000+տող 6000) | | **0,0** | **0,0** | **263000,0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝** (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+ տող4600+տող4700) | x | **0,0** | **0,0** | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4400 | **1.4. ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ** (տող4410+տող4420) | **x** | **20000,0** | **20000,0** | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4410 | ***ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ*** *(տող4411+տող4412)* | x | **20000,0** | **20000,0** | |
| | որից՝ | | | | |
| 4411 | **-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին** | **4511** | **20000,0** | **20000,0** | |
| 4700 | ***1.7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** *(տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770)* | x | **-283000,0** | **-20000,0** | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4770 | ***ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ*** *(տող4771)* | x | **-283000,0** | **-20000,0** | |
| | որից՝ | | | | |
| 4771 | **-Պահուստային միջոցներ** | **4891** | **-283000,0** | **-20000,0** | |
| | **այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ** | | **263000,0** | **263000,0** | |
| 5000 | **Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** (տող5100+տող5200+տող5300+տող5400) | **x** | **263000,0** | | **263000,0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5100 | **1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** (տող5110+տող5120+տող5130) | **x** | **263000,0** | | **263000,0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5110 | ***ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*** *(տող5111+տող5112+տող5113)* | **x** | **263000,0** | | **263000,0** |
| | որից՝ | | | | |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | **5113** | **263000,0** | | **263000,0** |

**Աշխատակազմի քարտուղար** [signature] **Նելլի Շահնազարյան**

*Հավելված 4*
*Կապան համայնքի ավագանու*
*«10» մայիս 2023թ. թիվ 50-Ն որոշման*

**Կապան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի թիվ 199-Ն որոշման թիվ 6 հավելվածում կատարվող փոփոխություններ**

(հազար դրամներով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** (տող2100+տող2400+տող2500 տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | **0,0** | **0,0** | **263000,0** |
| 2400 | 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2450+տող2490) | **77000,0** | **0,0** | **77000,0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2450 | 04 | 5 | 0 | ***Տրանսպորտ*** | **77000,0** | **0,0** | **77000,0** |
| | | | | որից՝ | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | **ճանապարհային տրանսպորտ** | **77000,0** | **0,0** | **77000,0** |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | **77000,0** | **0,0** | **77000,0** |
| | | | | Բ.ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | **77000,0** | | **77000,0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| | | | | 1.1ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ | **77000,0** | | **77000,0** |
| | | | | որից՝ | | | |
| | | | | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **77000,0** | | **77000,0** |
| | | | | որից՝ | | | |
| | | | | -Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | **77000,0** | | **77000,0** |
| 2900 | 09 | 0 | 0 | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** (տող2910+տող2950) | **206000,0** | **20000,0** | **186000,00** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | ***Նախադպրոցական և փարրական ընդհանուր կրթություն*** | **206000,0** | **20000,0** | **186000,0** |
| | | | | որից՝ | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | **Նախադպրոցական կրթություն** | **206000,0** | **20000,0** | **186000,0** |
| | | | | **այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների** | | | |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | **206000,0** | **20000,0** | **186000,0** |
| | | | | Ա.ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | **20000,0** | **20000,0** | |
| | | | | 1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ | **20000,0** | **20000,0** | |
| | | | | այդ թվում | | | |
| | | | | ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ)ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ | **20000,0** | **20000,0** | |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | որից՝ | | | |
| | | | | -Սուբսիդիաներ պետական (համայնքային)կազմակերպություններին | 20000,0 | 20000,0 | |
| | | | | **Բ.ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** | **186000,0** | | **186000,0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| | | | | **1.1ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | **186000,0** | | **186000,0** |
| | | | | որից՝ | | | |
| | | | | **ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **186000,0** | | **186000,0** |
| | | | | որից՝ | | | |
| | | | | -Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | **186000,0** | | **186000,0** |
| 3100 | 11 | 0 | 0 | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ** (տող3110) | **-283000,0** | **-20000,0** | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | ***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ*** | **-283000,0** | **-20000,0** | |
| | | | | որից՝ | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | **ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ** | **-283000,0** | **-20000,0** | |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝** | **-283000,0** | **-20000,0** | |
| | | | | **Ա.ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝** | **-283000,0** | **-20000,0** | |
| | | | | **ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | **-283000,0** | **-20000,0** | |
| | | | | որից՝ | | | |
| | | | | -Պահուստային միջոցներ | **-283000,0** | **-20000,0** | |
| | | | | **այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ** | **263000,0** | **263000,0** | |

***Աշխատակազմի քարտուղար*** ***Նելլի Շահնազարյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 51-Ա**
**10 ՄԱՅԻՍԻ 2023թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 71-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Պետական գույքի կառավարման կոմիտեի 05.05.2023թ. N 03/11.16/3383 գրությունը և Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2006 թվականի դեկտեմբերի 22-ի «Կապանի համայնքի թիվ 3 ՆՈՒՀ ՀՈԱԿ լուծարելու և Հայաստանի Հանրապետությանը գույք նվիրաբերելու մասին» թիվ 71-Ա որոշման 1-ին կետը:

2. Հաստատել.

1) «Կապանի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 1-ի:

2) «Կապանի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Լեռնագործների փողոցի 16/2 հասցեում գտնվող 1620.9 քմ մակերեսով մասնաշենքը՝ 0.1413 հա մակերեսով սպասարկման հողամասով

(անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27032023-09-0052 վկայական)՝ մինչև 2064 թվականի ապրիլի 1-ը ժամկետով:

4. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ( 21 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՋՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*2023թ. մայիսի 10*

*ք. Կապան*

**Հավելված N 1**
**ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու**
**2023թ. մայիսի 10-ի N 51--Ա որոշման**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզի Կապան
համայնքի ավագանու
10-.05.2023թ. թիվ 51-Ա որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ «23» հունիսի 2006թ.
գրանցման թիվը՝ 27.210.01388
Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 09418991

Կազմված է __.___.____ թ. և բաղկացած է __ թերթից
Տպագրված է ընդամենը ___ օրինակ
ՕՐԻՆԱԿ _______

23.06.2006թ. գրանցված կանոնադրության
թիվ 0012 փոփոխությունը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

«——» —————————— 2023թ.

Կապանի համայնքի ղեկավարի առաջին՝

տեղակալ ______________Գ.Թադևոսյան

_______________________________

# «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրությամբ)

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, Ք. ԿԱՊԱՆ
2023Թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Կապանի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:
2. Հաստատությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 30-Ա որոշման համաձայն /հաշվառվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կապանի տարածքային բաժնի կողմից 23.06.2006թ., պետական գրանցման /հաշվառման/ թիվ 27.210.01388/:
3. Հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքն է /այսուհետ՝ Հիմնադիր/, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարը:
4. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):
5. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Լեռնագործների փողոց, թիվ 16/2 շենք:
6. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
7. Հաստատության անվանումն է՝

   1) հայերեն լրիվ՝ «Կապանի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

   2) հայերեն կրճատ՝ «Կապանի թիվ 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ.

   3) ռուսերեն լրիվ՝ Муниципальная некоммерческая организация «Капанское дошкольное образовательное учреждение N 3».

   4) ռուսերեն կրճատ՝ МНКО «Капанское ДОУ N 3».

   5) անգլերեն լրիվ՝ «Kapan preschool educational institution N 3» community non-commercial organization».

   6) անգլերեն կրճատ՝ «Kapan PEI N 3» CNCO:
8. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:
9. Հաստատությունը կարող է ունենալ պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները,

հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները: Վերոնշյալ տեղեկատվությունը կարող է հրապարակվել նաև հիմնադրի պաշտոնական կայքէջում՝ http://www.kapan.am:

10. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
11. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
12. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
13. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

14. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:
15. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:
16. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
17. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
18. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
19. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:
20. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

21. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

22. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

23. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

24. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

25. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

26. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական

ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

27. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
28. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
29. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:
30. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
31. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:
32. «Կապանի թիվ 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տեսակը՝ մսուր-մանկապարտեզ /0-6 տարեկան երեխաների ընդգրկմամբ/: Հաստատությունում ընդունելությունը սկսվում է 2 տարեկանից:
33. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:
34. Հաստատությունն իր գործունեությունը կազմակերպում է ցերեկային ժամերին՝ 07:30-18:00 (10.5 ժամ), հնգօրյա աշխատանքային շաբաթով, հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:
35. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:
36. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրենության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
37. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը ենթակա են պարտադիր նախնական /աշխատանքի ընդունվելիս/ և հետագայում՝ տարին 1 անգամ պարբերական բժշկական զննության: Պարտադիր նախնական բժշկական զննության ծախսերը իրականացվում է թեկնածուի միջոցների հաշվին, իսկ հետագայում՝ պարբերական բժշկական զննության ծախսերը՝ հիմնադրի միջոցների հաշվին:

## 4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

38. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

39. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրենությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

40. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

41. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

42. Հաստատություն աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

43. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

44. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, պետական և համայնքային հաստատությունների դեպքում՝ գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

45. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

46. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

47. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

48. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

49. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

50. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

51. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

52. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

53. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

54. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

55. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

56. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

57. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

58. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

59. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

60. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

61. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

62. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

63. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

64. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

65. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

66. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

67. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանը իրենց կանոնադրական

գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:

68. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:
69. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:
70. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:
71. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
72. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից, ծնողական վարձավճարներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
73. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
74. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

75. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

76. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 2
Կապան համայնքի ավագանու
2023թ. մայիսի 10-ի թիվ 51-Ա որոշման

**Կապանի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

1 Խմբերի թիվը՝ 7

2 Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Միավորը | Դրույքաչափը | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 176700 | 176700 |
| 2 | Ուսման գծով տեղակալ | 1 | 139800 | 139800 |
| 3 | Գործավար | 1 | 104800* | 104800 |
| 4 | **Դաստիարակներ** | **10,85** | | **1336720** |
| 4,1 | Դաստիարակ 1-ին կարգ | | 135100 | |
| 4,2 | Դաստիարակ 2-րդ կարգ | | 123200 | |
| 4,3 | Դաստիարակ | | 116600 | |
| 5 | **Երաժշտության դաստիարակ** | **1,75** | | **209825** |
| 5,1 | Երաժշտության դաստիարակ 1-ին կարգ | | 119900 | |
| 5,2 | Երաժշտության դաստիարակ 2-րդ կարգ | | 112200 | |
| 6 | **Դաստիարակի օգնական** | **7** | **104800*** | **733600** |
| 7 | Բուժքույր | **1,5** | 104800* | 157200 |
| 8 | Խոհարար | 1 | 104800* | 104800 |
| 9 | Խոհարարի օգնական | 1 | 104800* | 104800 |
| 10 | Տնտեսվար | 1 | 104800* | 104800 |
| 11 | Օժանդակ աշխատող | 1 | 104800* | 104800 |
| 12 | Լվացարար-արդուկող | 1 | 104800* | 104800 |
| 13 | Պահակ | 1 | 104800* | 104800 |
| 14 | Գազի սարքավորումների պատասխանատու | 1 | 104800* | 104800 |
| | **Ընդամենը** | **31,1** | | **3592245** |

*Ծանոթություն* Դրույքաչափերը սահմանված են 1974 թ. հետո ծնվածների համար, մինչև 1974թ ծնվածների համար հաշվարկել 98200 դրամ դրույքաչափով:*

**Աշխատակազմի քարտուղար** **Նելլի Շահնազարյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 52-Ա**

**10 ՄԱՅԻՍԻ 2023թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածը և հաշվի առնելով Կապանի համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի և Էրիկ Կամոյի Աբրահամյանի միջև 2009 թվականի դեկտեմբերի 04-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի (հասցեն՝ ք.Կապան, Ռ. Մինասյան փող. թիվ 15 շենքի հարևանությամբ, մակերեսը՝ 0.002հա) կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրից (Կապան համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 27-ի N 784-Ա որոշմամբ լուծված) ծագած և չկատարված պարտավորությունները (ընդհանուր՝ 33440 /երեսուներեք հազար չորս հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, որից մայր գումար՝ 15220 /տասնհինգ հազար երկու հարյուր քսան/ ՀՀ դրամ և տույժ՝ 18220 /տասնութ հազար երկու հարյուր քսան/ ՀՀ դրամ) ներել և այն համարել դադարած:

2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել սույն որոշման կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ( 21 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ____________

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ____________

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ____________

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ____________

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ ____________

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ____________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ____________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ____________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ____________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ ____________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ____________

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ____________ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*2023թ. <u>մայիսի 10</u>*

*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 53-Ա

**10 ՄԱՅԻՍԻ 2023թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ԵՎ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն հրամանը և հաշվի առնելով «Տրիվիում Էքսպերտ» ՍՊ ընկերության 2023 թվականի ապրիլի 26-ի եզրակացությունը և Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցում գտնվող վերգետնյա հետիոտն կամուրջը՝ որպես վնասված գույք, դուրս գրել Կապան համայնքի հաշվեկշռից:

2. ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարին.

1) լիցենզավորված կազմակերպության օժանդակությամբ և վերջինիս միջոցների հաշվին քանդել /ապամոնտաժել/ Կապան համայնքի Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցում գտնվող վթարային վերգետնյա հետիոտն կամուրջը:

2) Սույն որոշման 2-րդ կետում նշված ապամոնտաժման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած շինաղբը կազմակերպության միջոցներով տեղափոխել համապատասխան աղբավայր, իսկ ջարդոնը որպես փոխհատուցում տրամադրել այդ աշխատանքներն իրականացրած կազմակերպությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ( 21 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ____________

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ____________

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ____________

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ____________

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ ____________

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ____________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ____________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ____________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ____________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ ____________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ____________

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ____________ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*2023թ. <u>մայիսի 10</u>*

*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 54-Ա**
**10 ՄԱՅԻՍԻ 2023թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՎԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 0.003 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 12-ի N 2/փ-95 դրական եզրակացությունն ու Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Աղվանի բնակավայրի համակցված փաստաթղթերում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագրեր 09-012-0101-0003-ից) 0,003 հեկտար «արոտավայրերի» հողատեսքը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա՝ «հասարակական կառուցապատման» հողեր գործառնական նշանակությամբ, համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

**Կողմ( 21 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ____________
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ____________
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ____________
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________
ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ____________

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ ____________

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ____________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ____________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ____________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ____________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ ____________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ____________

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ____________ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

***2023թ. <u>մայիսի 10</u>***

***ք. Կապան***

Հավելված
Կապան համայնքի ավագանու
10.05.2023թ Թիվ 34-Ն որոշման




Աշխատակազմի քարտուղար Ն. Շահնազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 55-Ա**
**10 ՄԱՅԻՍԻ 2023թ.**

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Համաձայնություն տալ Կապան համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ Հայաստանի Հանրապետության համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով Հայաստանի Հանրապետության համայնքներում Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:

2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Կապան համայնքի 2023թ. բյուջեից համապատասխան համաներդրում կատարելուն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 21 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ____________

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ____________

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ____________

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ________________

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________________

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________________

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________________

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ ________________

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________________

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ________________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ________________

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ________________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ________________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ________________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ________________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ________________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ________________

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ ________________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ________________

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ________________ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*2023թ. մայիսի 10*
*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 56-Ա

**10 ՄԱՅԻՍԻ 2023թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 42-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1544-Ն որոշման և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագիրը՝ ընդհանուր 166918,93 հազար դրամ արժողությամբ, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների մասով – 161918,93 հազար դրամ և առողջապահական միջոցառումների մասով – 5000,0 հազար դրամ, համաձայն հավելվածի:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու և պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմնի միջոցով 2024 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

**Կողմ( 21 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ______
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ______
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ______
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ______
ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ______
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ______

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ______________

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ______________

ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ ______________

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ______________

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ______________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ______________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ______________

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ______________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ______________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ______________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ______________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ______________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ______________

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ ______________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ______________

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ______________ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*2023թ. մայիսի 10*
*ք. Կապան*

Հավելված
Կապան համայնքի ավագանու
2023 թվականի մայիսի 10-ի թիվ 56-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

# ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

# ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
# ԵՎ
# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԿԱՊԱՆ – 2023

## ՆԱԽԱԲԱՆ

Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024թ. ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-188, 15.05.2001թ./, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի «ՀՀ Կառավարության որոշումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունը և դրանց ֆինանսավորման համամասնությունները «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն հաստատված և առաջիկա տարվա պետական բյուջեով նախատեսված ծրագրում համայնքի ավագանու կողմից առաջարկվող փոփոխությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգերը հաստատելու մասին» N 1544-Ն և 2014 թվականի փետրվարի 27-ի «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» N 197-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

### Նախատեսվող ծրագրի խնդիրները, նպատակները և կենսագործման անհրաժեշտությունը՝

Կապանը Հայաստանի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերական կենտրոններից մեկն է: Պղնձի և բազմամետաղային հանքավայրի երկարամյա շահագործումը, շրջակա տարածքներում իրականացված և իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքները, խոշոր պոչամբարների առկայությունը, հին հանքախորշերի փլուզման վտանգները, սողանքային ակտիվությունը, ժամանակին կատարված տարածքի անտառների անկանոն հատումները, քաղաքի միջով անցնող և խոշոր բեռնատարների երթևեկությամբ ծանրաբեռնված միջազգային ավտոմայրուղին քաղաքի բնության և բնակչության առողջության համար էկոլոգիական մեծ ռիսկեր են պարունակում:

Կապանի միջով հոսող Վաչագան գետը սկիզբ է առնում Խուստուփ լեռան հյուսիս-արևելյան լանջերից: Վաչագան գետի երկարությունը 11 կմ է:

Գետը հոսում է քաղաքի կենտրոնով, և թվում է, թե հենց դրանով ապահովված կլինի քաղաքի յուրահատուկ գեղեցիկ տեսքը, սակայն գետը լցված աղբը, քարերն ու ավազը այլ տեսարան են ստեղծում:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն (շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքարը, որը ներառում է մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների պահպանության աշխատանքներ և միջոցառումներ), համայնքը նախատեսում է 2024 թվականին շարունակել 2023 թվականի ծրագիրը, այս անգամ ներառելով Սյունիքի մարզպետարանի հարակից կամրջից մինչև Ողջի գետի հետ հատման հատվածը՝ մաքրելով Վաչագան գետի հունը, վերանորոգելով/վերականգնելով բետոնե հարթակները/հայելային պատկերներն ու հենապատերը:

Հարկ ենք համարում նշել, որ 2021 թվականի բնապահպանական ծրագրով Վաչագան գետի վրա կառուցվել է ջրավազան, որտեղ կուտակվում են քարերը, ավազը և ծառերի ճյուղերը: 2023 թվականին կմաքրվի և կբարեկարգվի Կապանի բժշկական

կենտրոնից մինչև մարզպետարանի հարակից կամուրջն ընկած հատվածը: 2024 թվականին նախատեսվող աշխատանքները 2021 և 2023 թվականներին կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունն են, քանի որ գետի այս հատվածը նույնպես կմաքրվի, իսկ արդեն իսկ կառուցված ջրավազանը հնարավորություն է տալիս խուսափելու հետագա աղտոտումից:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքով սահմանված համայնքին մասհանվող գումարով նախատեսվում է իրականացնել Սյունիքի մարզպետարանին հարակից կամրջից մինչև Ողջի գետին հատվող հատվածը ներառող աշխատանքները: Ծրագրով նախատեսվում է մաքրել 6510 քմ տարածք /երկարությունը՝ 465 մ, լայնությունը 14 մ/: Նախատեսվում են նաև բետոնե հարթակների, գետի հենապատերի վերականգնման և վերանորոգման աշխատանքներ:

Գետի ենթակառուցվածքների բարեկարգման նպատակով այլ ֆինանսական միջոցներով կիրականացվի ճաղավանդակների, բազրիքների վերանորոգում, նոր ճաղավանդակների տեղադրում, կից մայթերի վերանորոգում, դիտահորերի նորոգում բարձրացումով՝ 2 հատ, փտած և վնասատուներով վարակված ծառերի հանում և նոր ծառերի տնկում, 3 հատ հետիոտն կամուրջների ձևափոխում, մայթերի և գետի համար լուսավորության համակարգի անցկացում:

Այսինքն, Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագրի բնապահպանական մասի խնդիրը Վաչագան գետի ներկայիս անբարեկարգ և աղտոտված վիճակն է: Ներկայիս վիճակը շտկելու, գետը մաքրելու և մաքուր տեսքը պահպանելու նպատակով համայնքը նախատեսում է մաքրել գետը և բարեկարգել գետի ենթակառուցվածքները:

Կապան համայնքի Օխտար բնակավայրը խոշորացված համայնքի 38 գյուղերից մեկն է: Այն գտնվում է մարզկենտրոնից 16 կմ, մայրաքաղաքից 288 կմ հեռավորության վրա: Գյուղում գործում է դպրոց:

Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2024 թվականի ծրագրի առողջապահության մասի միջոցառումների շրջանակում համայնքը նախատեսում է բարեկարգել Օխտար գյուղի բուժկետը: Այսինքն միջոցառման խնդիրը Օխտար գյուղի բուժկետի ներկայիս անբարեկարգ վիճակն է: Խնդիրը լուծելու նպատակով նախատեսվում է գյուղի նոր կառուցվող /նախատեսվում է կառուցել 2024 թվականին/ վարչական շենքից 1 սենյակ հատկացնել բուժկետին: Որպես բուժկետ առանձնացված սենյակն ունի 8,32 քմ մակերես: Բուժկետի սենյակի կառուցման գումարը կազմում է 5,0 մլն դրամ:

Արդյունքում կբարձրացվի բնակչությանը տրամադրվող առաջին բուժօգնության և բուժսպասարկման ծառայության մակարդակը:

Ծրագրի առաջնայնությունները սահմանվել են նկատի ունենալով համայնքում բնահպանական և առողջապահական ակնառու խնդիրների առկայությունը, ինչպես նաև՝

*հաշվի առնելով* համայնքի և շրջակա տարածքների վրա լեռնահանքային արդյունաբերության բացասական ազդեցությունը,

*համոզված լինելով*, որ հնարավոր չէ համայնքի կայուն զարգացումը առանց բնապահպանական բաղադրիչի,

*գիտակցելով* մարդու լիարժեք կենսագործունեության համար էկոլոգիական անվտանգության ապահովման կարևորությունը:

2010 թվականին Կապան քաղաքում «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության» ծրագրով իրականացվել է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում սեպտիկ թափոնների, թաղման փոսի և սրածայրի կառուցում: 2011-2012 թվականներին իրականացվել են Ողջի գետի մաքրման աշխատանքներ: 2013-2019թթ «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության» ծրագրով իրականացվել է Կապան քաղաքի Արամ Մանուկյան փողոցի մայթի բարեկարգման, ծառերի էտման, հատման, ծառատնկման և տարածքի կանաչապատման ու վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքներն իրականացվել են ոչ միայն պետական բյուջեի, այլ նաև համայնքի բյուջեի և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացված գումարներով: 2020 թվականին, ինչպես հանրապետության այլ համայնքներում, այնպես էլ Կապանում, շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագիր չի իրականացվել: 2021 թվականին Վաչագան գետի վրա կառուցվել է ջրավազան, 2023 թվականին նախատեսվում է մաքրել և բարեկարգել Վաչագան գետի մի հատվածը:

Նախորդ տարիներին առողջապահական ծրագրերի մասով վերազինվել են համայնքի ՆՈՒՀ-երի և մարզադպրոցների բուժկետները, ինչպես նաև նախկինում լեյշմանիոզի դեպքեր արձանագրած թաղամասերում իրականացվել են աղբարկղների և օրգանական աղբի կուտակումների մշակումներ /ախտահանում/՝ երկարատև մնացորդային ազդեցության միջատասպան նյութերով: Առողջապահական միջոցառումներն իրականացվում են համայնքի բյուջեի միջոցների հաշվին: 2021 թվականի առողջապահական մասով նորոգվել է Արծվանիկ գյուղի բուժկետի համար նախատեսված տարածքը, ծրագիրն իրականացվել է համայնք-պետություն համագործակցությամբ՝ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի շրջանակներում:

*Ծրագրի ակնկալվող արդյունքները՝*

**Նպատակ 1 Շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար**

**Խնդիր 1 Ջրային ռեսուրսների պահպանություն, աղտոտվածության նվազեցում, մթնոլորտային օդի մաքրության պահպանություն**

Գործողություն 1 Կապան համայնքի Կապան քաղաքով հոսող Վաչագան գետի մաքրում և գետի ենթակառուցվածքների բարեկարգում:

*Արդյունք* ա/ Վաչագան գետի աղտոտվածության նվազեցում,

բ/ դրական ազդեցություն՝ Վաչագան գետի կենսաբազմազանության վրա,

գ/ Քաղաքի գեղեցիկ տեսքի վերականգնում,

դ/ Գետի ենթակառուցվածքների բարեկարգում,

ե/ Հարակից մայթի նորոգում, վնասված ծառերի հանում, նոր ծառերով փոխարինում,

զ/ Բնակչության անվտանգության /անվտանգ տեղաշարժի/ ապահովում:

**Խնդիր 2 Առողջապահական համակարգի հզորությունների ուժեղացում**

*Գործողություն 1* Կապան համայնքի Օխտար գյուղի բուժկետի համար նախատեսված սենյակի կառուցում:

*Արդյունք* ա/ կբարելավվի Օխտար գյուղի բնակչությանը մատուցվող առաջին բուժօգնության և բուժսպասարկման մակարդակը:

բ/ Կբարձրանա բնակիչների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներն ապահովող գործընթացների մակարդակը:

***Իրագործման փուլերը / ժամանակացույցը/***

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքով սահմանված համայնքին մասհանվող գումարով ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ընթացքում՝ փետրվարից-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

***Իրականացման համար անհրաժեշտ ծախսերը***

Բնապահպանական հարկից համայնքի բյուջե մասհանվող գումարով՝ 161 918 930 ՀՀ դրամով, նախատեսվում է մաքրել գետի հունը, վերականգնել և վերանորոգել բետոնե հարթակները և հենապատերը: Այլ ֆինանսական միջոցներով կիրականացվի գետի ենթակառուցվածքների՝ ոչ բնապահպանական բնույթ կրող նորոգման աշխատանքները, ծրագիրը կազմման և հաստատման պահին գումարը հստակեցված չէ:

Օխտար գյուղի բուժկետի սենյակի կառուցման աշխատանքները կրկին կիրականացվեն այլ ֆինանսական միջոցների հաշվին, աշխատանքների իրականացման գումարը նախնական հաշվարկներով կազմում է 5 000 000 ՀՀ դրամ: Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության 2024 թվականի ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 166 918 930 ՀՀ դրամ:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի իրականացմամբ կլուծվեն համայնքի համար կարևոր՝ Վաչագան գետի աղտոտվածության և Օխտարի բուժկետի սենյակի կառուցման խնդիրները:

Ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի բնակչության համար մաքուր, առողջ և անվտանգ կենսամիջավայր ստեղծելուն, ինչպես նաև դրական ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ*
*ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

*Աղյուսակ 1*

*Կապան համայնքի 2024թ. շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները*

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Ծրագրի արժեքը, ընդամենը /հազ. դրամ/ | Այդ թվում ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պետական բյուջե /հազ. դրամ/ | տեղական բյուջե /հազ. դրամ/ | այլ /հազ. դրամ/ | |
| I | **Բնապահպանական միջոցառումներ** | **161918,9** | **161918,9** | **0,0** | **0,0** | |
| 1 | Շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքար՝ | 161918,9 | 161918,9 | 0,0 | 0,0 | |
| 1.1 | Կապան համայնքի Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրում, բետոնե հարթակների, գետի հենապատերի վերականգնում և վերանորոգում | 161918,9 | 161918,9 | | | Ծրագրով նախատեսվում է մաքրել 6510 քմ տարածք /երկարությունը՝ 465 մ, լայնությունը 14 մ/: Այլ ֆինանսական միջոցներով մախատեսվում են նաև հետևյալ աշխատանքները՝ բետոնե հարթակների /հայելային պատկերներ/ վերականգնում, վերանորոգում, հենապատերի հիմքերի ուժեղացում, հենապատերի վերկանգնում, վերանորոգում, ճաղավանդակների, բազրիքների վերանորոգում, բետոնե բազրիքների քանդում, նոր ճաղավանդակների տեղադրում, մայթերի վերանորոգում՝ երկարությունը 465 մ, դիտահորերի նորոգում բարձրացումով՝ 2 հատ, փտած և վնասատուներով վարակված ծառերի հանում և նոր ծառերի տնկում, 3 հատ հետիոտն կամուրջների ձևափոխում, մայթերի և գետի համար լուսավորության համակարգի անցկացում: |
| II | **Առողջապահական միջոցառումներ** | **5000,00** | **0,00** | **0,00** | **5000,00** | |
| 1 | Կապան համայնքի Օխտար գյուղի բուժկետի սենյակի կառուցում | 5000,00 | | | 5000,0 | Նախատեսվում է կառուցել բուժկետի համար նախատեսված սենյակ |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐԸ** | **166918,93** | **161918,93** | **0,00** | **5000,00** | |

**Աշխատակազմի քարտուղար՝** [signature] **Նելլի Շահնազարյան**

**Կապան համայնքի 2024 թվականի բնապահպանական և առողջապահական ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման առաջնայնությունները, ֆինանսավորման համամասնությունները և աղբյուրները**

| N | Միջոցառման անվանումը | Գումարը /հազ. դրամ | Պետական բյուջե /հազ. դրամ | Այլ /հազ. դրամ | Համամասնությունը % |
|---|---|---|---|---|---|
| I | ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 161918,93 | 161918,93 | | 97,0 |
| 1 | Կապան քաղաքի Սյունիքի մարզպետարանին հարակից կամրջից մինչև Ողջի գետի հետ հատման հատված՝ Վաչագան գետի հունի մաքրում, բետոնե հարթակների, գետի հենապատերի վերականգնում և վերանորոգում | 161918,93 | 161918,93 | | 97,0 |
| II | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | 5000,00 | | 5000,00 | 3,0 |
| 1 | Կապան համայնքի Օխտար գյուղի բուժկետի սենյակի կառուցում | 5000,00 | | 5000,00 | 3,0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 166918,93 | 161918,93 | 5000,0 | 100 |

Համաձայնեցված է

Հայաստանի Հանրապետության
Առողջապահության նախարար

Անահիտ Ավանեսյան

_______________

«13» 04 2023թ

Հավելված

«Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման» 2024թ ծրագիր

Կապան համայնքի 2024 թվականի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց դիմաց ֆինանսավորման համամասնությունները

| N | Միջոցառման անվանումը | Գումարը /հազ. դրամ/ | Պետական բյուջե /հազ. դրամ/ | Այլ /հազ. դրամ/ | Համամասնությունը % |
|---|---|---|---|---|---|
| I | ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 161918,93 | 161918,93 | | 97,0 |
| 1 | Կապան քաղաքի Սյունիքի մարզպետարանին հարակից կամրջից մինչև Ողջի գետի հետ հատման հատված՝ Վաչագան գետի հունի մաքրում, բետոնե հարթակների, գետի հենապատերի վերականգնում և վերանորոգում | 161918,93 | 161918,93 | | 97,0 |
| II | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | 5000,00 | | 5000,00 | 3,0 |
| 1 | Կապան համայնքի Օխտար գյուղի բուժկետի սենյակի կառուցում | 5000,00 | | 5000,00 | 3,0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 166918,93 | 161918,93 | 5000,0 | 100 |

**Համաձայնեցված է**

Շրջակա միջավայրի նախարար

______________ Հ.Սիմիդյան

«25» ______ 2023թ.

**Հավելված**

Կապան համայնքի 2024թ.

բնապահպանական ծրագրի

**Կապան համայնքի 2024 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները**

**Կապան համայնքի 2024 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Գումարը /հազ. դրամ/ | Համամասնությունը% |
|---|---|---|---|
| | ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 161918.9 | 100.0 |
| | *Վաչագան գետի հունի մաքրում, բետոնե հարթակների, գետի հենապատերի վերականգնում և վերանորոգում՝ Սյունիքի մարզպետարանին հարակից կամրջից մինչև Ողջի գետի հետ հատման հատվածը* | 161918.9 | 100.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 161918.9 | 100.0 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 57-Ա**
**10 ՄԱՅԻՍԻ 2023թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Կապան համայնքի ավագանու կանոնակարգի 2-րդ բաժնի 6.1-րդ և 6.2-րդ կետերով, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը որոշել 2023 թվականի հունիսի 28-ը:

**Կողմ( 21 )՝**

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ________
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ________
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ________
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________
ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ________
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________
ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ ________
ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________
ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ________
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ________
ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

***2023թ. մայիսի 10***
***ք. Կապան***